ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԵԶ ԵՄ ՍԻՐՈՒՄ

ԵԶ եմ սիրում, քեզ եմ սիրում,
Սեղմում եմ քեզ մոլեգին՝
Ծաղկահասակ իմ գրկին.
Քնաբ է սիրուս, եւ լարերին
Սէրն է բախում անընդհատ,
Սէրը չքնաղ, անարատ։

Տուէք, ճերմակ հրեշտակներ,
Ձեր երկնային քնարն ինձ.
Շրթներիս վրայ դրոշմեցէք
Ձեր սաղմոսները անբիծ,
Որ նորածիլ երգեմ սրտիս
Բաբախումները աշխոյժ—
Ձեր անպատում մեղեդիով,
Մեղեդիները անոյշ։

Ապուշ կրթած ու զարմացած
Թող ընութիւնն ինձ լսէ,
Արձագանգը թող երգերիս
Երկրի չորս կողմը հնչէ.
Թող հմայուած արշալոյսն ու
Վերջալոյսն ինձ լուանան
Ճաճանչներով ոսկենման։

Ինչո՞ւ լուռ ես, ինչո՞ւ լուռ ես,
Ի՛մ պաշտելի դիցուհի,
Որին ժպիտն ընծայ բերին
Հրեշտակները ոսկի.

Բա՛ց շրթներդ չնաշխարհիկ
Եւ զերդ մուսայ հոգեշունչ
Յաբիր երգիս՝ ախորժելի
Քո երգերից մի մրմունջ։

Թո՛ղ համբուրեմ, թո՛ղ համբուրեմ
Բերանդ, որից ծորում՝ ես
Սիրոյ մեղրը, մեղրը անոյշ,
Որով շուրթըս ցողում՝ ես,—
Ինչպէս զեփիւռն է համբուրում
Իր շնչովը սիրային՝
Վարդը քնքոյշ, զարնային։

Թո՛ղ համբուրեմ, թո՛ղ համբուրեմ
Աչերդ, որոնք սփռում՝ են
Կենդանացած իմ հոգու մէջ
Երկնի շողը լուսեղէն.
Եւ նախանձով թող դիտեն իմ
Երանաւէտ այս վիճակ՝
Ոսկեպսակ աղքաները
Երկրագնդի բովանդակ։

Քեզ եմ սիրում, քեզ եմ սիրում,
Սեղմում՝ եմ քեզ մոլեգին
Ծաղկահատակ իմ գոկն.
Հոգիս քոյն է՝ եւ այդ քոյնում
Սէրն է ապրում՝ անարատ,
Որ հրճուանքով՝ իր ապիտակ
Բախում՝ թեւերն անընդհատ։

Հեղ. Տիկ. Կ. Լ. ՊՐԷՎԷԶԻՈՏԻՍ.

Թարգմ. յունարէնից՝
ՄԵՍՐՈՊ. Վ. ՄԱՔՍՈՒԴԵԱՆՑ